

# ԲԱՐԱՌՆՈՒԹԻՒՆ

Քաջ Թագավոր .

ՄԱՂԱԴ վարեն , ուշիմ կայսեր՝ կեանս հպատակք ,  
Սիմեանց վատաց կարելցելով ատեն զկագ .  
Եւ օր քան զօր յառաջ խաղան մոյն մարթանօք ,  
Նովիմբ կայսեր՝ ճոխացուսցեն պատիւ եւ փառք :

Վագ Թագավոր .

Անվարժ կայսեր՝ որք ՚ի ներքոյ իշխանութեան ,  
Սիշտ անհանդարտ՝ ծիւեալ լինին ծովու նման .  
Քաջն զտկար՝ ճոխն զադքատ՝ վեհն զկրտուեր ,  
Ընթադրեալ նեղեն կտտեն՝ եւ ոչ խղձան :

Քաջ Հայրապետ .

Կորովիմաստ՝ ով ոչ ձօնէ Հայրապետի ,  
Արիաբար՝ չարին ընդդէմ մաքառողի .  
Եւ ընդ հստին՝ ՚ի մահուանէ աներկիւղի ,  
Գովեստ եւ շուք՝ եւ զհամբոյը պատկառելի :

Վագ Հայրապետ .

Հայրապետի խնամողի ոչ իւրայնոց ,  
Ընդդէմ լինին միահաղոյն՝ գունդըք Արբոց .  
Նա եւ յերկնուստ՝ ընդ պսակին գան կշտամբանք ,  
Ի հանդիսին տուեալ լիցին՝ աշխարհակոչ :

Քաջ Առաջնորդ .

Առաջնորդի թէ լուրջ իցեն ականողիք ,  
Յանքոյթ տանի նաւահանդիստ բանեղ օդիք ,  
Ո՛չ ՚ի նոցունց թողու գնալ զոք ՚ի բաւիլ .  
Ուր հուր անշէջ եւ գոն որդունք բազմաժանիք :

Վագ Առաջնորդ .

Վայ կուրացեալ Առաջնորդի՝ կարդաց սուրբ տառ ,  
Որոյ մնան ովսարհքն ասեմ յանլոյս խաւար .

Զորս կամաւ առ մատնութեամբ չոր սսոխին ,  
Յանդերծ տանջի՝ յարբանեկաց տարտարոսին :

Քաջ Քահանայ .

Քահանայի սրբակաց միշտ՝ վարս ունողի ,  
Աիրտս ներքուստ ասէ յաւէտ տնւր երանի ,  
Որ ըստ շաւզաց աշտկերտաց Երկնաւորին ,  
Սուրբ ընթացիւք հովուել փութայ իւրոյն հօտի :

Վապ Քահանայ .

Վարք թէ իցեն խենեշական եւ ատելի ,  
Քահանայի հովուի գառանց Քրիստոսի .  
Արտատրոփի վայն ՚ի Տեառնէ բազմադիմեան ,  
Տացի նմա յետնում աւուր յայտ յանդիման :

Քաջ Վարժապետ .

Վարժապետի ջանասիրի եւ ուսուցչի ,  
Պատիւ յերկինս ՚ի յԱստուծուստ տուեալ լինի .  
Եւ բարեմաղթ զնմանէ ՚ի յաշխարհիս ,  
Աշտկերտաց գաոք լինիցին բարեվարժից :

Վապ Վարժապետ .

Վարժապետք վատաբարոյք նշաւակին ,  
Հանգունատիպ ալեւորեալ մեծ սովեստին .  
Օն դու ջանայ ՚ի քեզ ունիլ բարս բարիս ,  
Զի մի յետոյ անարգանաց արժան լիցիս :

Քաջ Իշխան .

Իշխանք թէ են աստուածասէր եւ երկիւղած ,  
Միշտ անաչառ զազդս գատող ըստ օրինաց .  
Պսակեսցին երկնաժառանգ ընդ իշխանաց ,  
Ի յիշխանէն քառածագեան Տիեզերաց :

Վապ Իշխան .

Զիշխանս անկիրթ վայէ պսակն դիտնոց համայն ,  
Ցորս վեց փոյթ գերդաստանաց զԱզդային տան .

Որք դատ թիւրեն որոց դիմեն առ ինքեանս ,  
կամ ուր գուցեն վէճ եւ ժխոր արծարծ մեծ տան :

Քաջ Ժողովութ :

**Զժողովրդովլք** հնազանդելոց Աստուածայնոյն ,  
Բանակը գայցեն շրջափակել երկնից զօրուն .  
Որովք իւրեանց հանդերձ կայցեն ծննդովք զերծեալ  
Աստ յարկածից անդ ՚ի նսեմ խորոց գբոյն :

Վաստ Ժողովութ :

Այն ժողովուրդք , որք գժտութիւն վրդովլագին :  
Սիրեն խուզեն եւ ցանդ զհետ նորուն պնդին ,  
Օտարանան ՚ի յարքայէն խաղաղ անուն ,  
Հպատակին սեւադիմեան զօրաց չարին :

Կ . Բագրագունեան  
Միաբնեցի :

Յ. ՀՈՎՈՒԵԱՆ

ԵԽ ԻԽԻՐ ՎԻՄԱԴԻԹ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆ

Ազգային լլագիրք ումանք խօսեցան  
արդէն Յ. Հովուեանի հրատարա-  
կութեան մասին , որ , ինչպէս կ'ե-  
րեւի , տարածուած է գրեալ թէ ամեն  
հսյաբնակ քաղաքաց մէջ : Այս այլան-  
դակ հրատարակութիւնն , որ զուրկ  
է մարդկային համեստախօսութեան  
ամեն պայմաններէ , անշուշտ Ա. Խջի-  
ածին եւս հասած է , և ՚ի հարկ է  
ԱՐԱՐԱՏ Ըմագիրն կը փութայ հեր-  
քել սոյն անլուր ամբաստանադիրն ,  
որով չարաչար կ'ամբաստանուի Վ. Ե-  
հափառ . կաթողիկոսն , Ավայն , ա-  
ռանց Վ. Եհափառ . կաթողիկոսի և Ան-  
տաշեան Ատեփան Ղափիկոպոսի մէջ  
պատահած անցից խորին թափանցնելու ,

որ մութէ մեղհամար , Հովուեանի հը-  
րատարակութեան պարունակութիւ-  
նըն միայն նկատողութեան առնլով՝  
կը տեսնեմք , որ այնչափ անպարկիցտ  
է և հեռի մարդավարութենէ , որ  
Պ. Հովուեանն , փոխանակ զայլս ամ-  
բաստանելու՝ աւելի զինքն կ'ամբաս-  
տանէ : Ով որ Հայու սիրտ և արիւն  
կը կրէ . ով որ Հայութեան պատիւ  
կրդդայ , ով որ զինքն Հայաստանեայց  
Եկեղեցւոյ զաւակ կը համարի , ան-  
հնարին է որ այսպիսի անարդ և ան-  
պատկառ լեզու գործածէ իւր Հայ-  
րապետին դէմ՝ ՚ի սոսկումն պարկեցտ  
լսելեաց և ՚ի գայթակղութիւն պար-  
զամիտ հասարակութեան :

Պ. Հովուեան ինչո՞ւ Հովովմէն կը  
յայտարարէ թէ՝ թնդըոլոքէ և կոչէ  
զիս կաթողիկոսն , պատարաստեմ՝ իրեն